




ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ 2013թ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

Ելենա Մանուկյան, տ.գ.թ.
Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն
(EDRC)


Բովանդակություն

- Պետական գերակայության ոլորտ
- Միջազգային համադրումներ
- Ֆինանսավորուման կառուցվածքը
- Աճն ըստ հիմնական գործոնների ազդեցության
- Քաղաքականության առաջարկներ


Պետրյուզեի ծախսերը և առողջապահության ֆինանսավորումը, մլրդ դրամ




Պետբյուջեի ծախսերը և առողջապահության ֆինանսավորումը ՀՆԱ-ում, %



Պետբյուջեի ծախսերի և առողջապահության ֆինանսավորման աճ, %




Ոլորտների կշիռը պետբյուջեի ծախսերի մեջ 2012-2013թթ, %



Առողջապահության պետական ֆինանսավորումը 2011-ին


Մասնաբաժինը պետբյուջեի ծախսերի մեջ, %



Աղբյուրը՝ ԱՀԿ և ՏՀՀԿ

Առողջապահության պետական ֆինանսավորումը 2011-ին


Մասնաբաժինը պետբյուջեի ծախսերի մեջ, %



Աղբյուրը՝ ԱՀԿ և ՏՀՀԿ


Առողջապահության պետական և մասնավոր ծախսերը 2011-ին

■ Մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար (ԳՀ ճշգրտված)
● Մասնաբաժինը ՀՆԱ-ում, % (աջ առանցք)




Աղբյուրը՝ ԱՀԿ և ՏՀԿ

Առողջապահության պետ. ֆինանսավորման կառուցվածքը Հայաստանում (ըստ ֆինանսավորման դասերի, %)



Աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջեի մասին օրենք 2012թ



2013-ին պետական ֆինանսավորման աճը Հայաստանում (ըստ ֆինանսավորման դասերի, %)



- Բժշկական ապրանք, սարք, սարքավորում
0 դրամ
- Արտահիվանդանոցային ծառայություններ
+ 107.5 մլն դրամ
- Հիվանդանոցային ծառայություններ
+ 175.2 մլն դրամ
- Հանրային առողջապահական ծառայություններ
+ 90.1 մլն դրամ
- Այլ դասերին չպատկանող + 6,852.4 մլն դրամ
(82%-ը՝ ՀԲ վարկեր, կապիտալ շինարարություն)

Աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջեի մասին օրենքներ 2012թ, 2013թ

Առողջապահության պետ. ֆինանսավորման կառուցվածքը Հայաստանում (ըստ ֆինանսավորման դասերի, %)



Աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջեի մասին օրենքներ 2012թ, 2013թ

Առողջապահության պետ. ֆինանսավորման բաշխումը Հայաստանում (ըստ ֆինանսավորման դասերի)

	2009	2012	2013	2013-ի փոփոխությունը 2012-ի համեմատ (անվանական)	
				մլն դրամ	%
Առողջապահություն	56,168.8	65,126.5	71,978.9	6,852.3	10.5
Բժշկական ապրանք, սարք, սարքավորում	3,551.0	3,687.5	3,687.5	-	-
Արտահիվանդանոցային ծառ.	20,431.5	23,803.2	23,910.7	107.5	0.5
Հիվանդանոցային ծառ.	21,606.2	27,080.9	27,256.1	175.2	0.6
Հանրային առողջապահական ծառ.	2,853.6	3,069.4	3,159.5	90.1	2.9
Այլ դասերին չպատկանող	7,726.5	7,485.5	13,965.0	6,479.5	86.6

Աղբյուրը՝ ՀՀ պետբյուջեի կատարողական և 2012, 13թթ. պետական բյուջեի մասին օրենքներ

Առողջապահության ֆինանսավորման փոփոխությունը պայմանավորող գործոնները 2013-ին

(ընդամենը փոփոխություն **6,852** մլն դրամ)

- Շահառուների թվաքանակի փոփոխություն՝ **+ 4** մլն դրամ
- Օրենսդրական փոփոխություններ՝ **+ 329.4** մլն դրամ
 - 1) Եկամտային հարկից՝ **+ 261.8** մլն դրամ
 - 2) նվազագույն աշխատավարձի աճից՝ **+ 67.6** մլն դրամ

Առողջապահության պետ. ֆինանսավորման աճը օրենսդրական գործոնի հաշվին (+ 329.4 մլն դրամ)

2013թ.	Ընդհանուր փոփոխությունը 2012-ի նկատ.	Աճ օրենսդրական փոփոխության հաշվին		Եկամ. հարկից	Նվազ. աշխատավարձից
	մլն դրամ	% ընդ փոփ մեջ	մլն դրամ	մլն դրամ	մլն դրամ
Առողջապահություն	6,852.3	4.5	329.4	261.8	67.6
Արտահիվանդանոցային ծառ.	107.5	105	112.9	99.2	13.7
Հիվանդանոցային ծառ.	175.2	100	175.2	126.3	48.9
Հանրային առողջապահական ծառ.	90.1	31.9	28.7	23.8	4.9
Այլ դասերին չպատկանող	6,479.5	0.2	12.5	12.5	-

Առողջապահության ֆինանսավորման փոփոխությունը գնաճի և օրենսդրական գործոնների հաշվին (2013թ 4.2% միջին գնաճի դեպքում)

	2013-ի փոփոխությունը 2012-ի համեմատ					
	Անվանական աճ		Իրական աճ (օրենսդ. փոփոխ)		Իրական աճ (առանց օրենսդ փոփոխ)	
	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%
Առողջապահություն	6,852.3	10.5	3,951.0	6.1	3,635.0	5.6
Բժշկական ապրանք, սարք, սարքավորում	-	-	-148.6	-4.0	-148.6	-4.0
Արտահիվանդանոցային ծառ.	107.5	0.5	-856.3	-3.6	-964.6	-4.1
Հիվանդանոցային ծառ.	175.2	0.6	-923.4	-3.4	-1,091.6	-4.0
Հանրային առողջապահական ծառ.	90.1	2.9	-37.3	-1.2	-64.8	-2.1
Այլ դասերին չպատկանող	6,479.5	86.6	5,916.6	79.0	5,904.6	78.9

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ, ՏՁՀԿ հաշվարկներ

Առողջապահության ֆինանսավորման փոփոխությունը 2013-ին


- Անվանական արտահայտությամբ (առանց գնաճի գործոնի)
+ 6,852 մլն դրամ կամ 10.5%,
աճ 4 դասում 5-ից, 1-ում՝ անփոփոխ
- Իրական արտահայտությամբ (4.2% գնաճի պայմաններում)
+ 3,951 մլն դրամ կամ 6.1%
աճ 1 դասում, անկում՝ 4-ում
- Իրական արտահայտությամբ (4.2% գնաճի պայմաններում՝ չեզոքացնելով
օրենսդրական փոփոխությունները)
+ 3,635 մլն դրամ կամ 5.6%
աճ 1 դասում, անկում՝ 4-ում

ՄԳԻ և բուժառայությունների գնաճը, %


	2009	2010	2011	2012	2013
ՄԳԻ, միջին	3.4	8.2	7.7	2.6	4.2
Բուժ ծառայությունների գնաճ	11.6	6.4	11.1	9.0	4.2
Բուժ ծառ. գնաճ (կուտակային, 2008=100%)	111.6	118.7	131.9	143.8	149.8

Ֆինանսավորման աճը (2008=100 %)

Գծ 1. Արտահիվանդանոցային ծառայություններ



Գծ 2. Հիվանդանոցային ծառայություններ



Առողջապահական պետական նպատակային ծրագրերը (մլն դրամ)

	2012	2013	2013/2012 նկատմամբ	
	մլն դրամ		մլն դրամ	%
Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	8,621.3	8,664.2	42.9	0.5
Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ	4,113.7	4,141.1	27.4	0.7
Մոր և մանկան բժշկական ծառայություններ	13,530.0	13,615.8	85.8	0.6
<i>Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ</i>	6,438.8	6,479.3	40.5	0.6
<i>Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ</i>	396.1	398.7	2.6	0.7
<i>Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ</i>	6,695.0	6,737.7	42.7	0.6
Հիգիենիկ և հակահամաճարակային անվտանգության ապահովում	2,017.3	2,040.3	23.0	1.1
Ընդամենը	28,282.3	28,461.4	179.1	0.6
Կշիռը առողջապահության բյուջեում, %	43.4	39.5		

Աճի ավելի քան 60%-ը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին ՀՀ օրենքի» կիրարկմամբ:

Առողջապահության բյուջեի մեջ պետական նպատակային այս ծրագրերի կշիռը գնալով կրճատվում է:

Բնակչության վերարտադրողական առողջության պահպանմանն ուղղված ծրագրերը (մլն դրամ)

	2009	2012	2013	Աճ, % 2013/2012	Աճ, % 2013/2009
Մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնության ծառ.	1,040.2	1,312.7	1,332.4	1.5	28.1
Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բուժօգնության ծառ.	162.7	170.1	171.2	0.6	5.2
Մանկաբարձական բուժօգնության ծառ.	5,872.6	6,438.8	6,479.3	0.6	10.3
Գինեկոլոգիական հիվանդությունների բուժօգնության ծառ.	362.0	396.1	398.7	0.7	10.1
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառ.	112.9	112.9	115.8	2.6	2.6
Ընդամենը	7,550.4	8,430.7	8,497.6	0.79	12.5
Աճը նախորդ տարվա նկատմամբ, %	-	-0.04	0.79	-	-
Կշիռը առողջապահության բյուջեում, %	13.4	12.9	11.8	-	-

Հանրային առողջապահական ծրագրերի Վերարտադրողական բաղադրիչը Հայաստանում գերակայություն չի ստանում:

Առողջապահության ոլորտում արտաքին օժանդակությամբ իրականացվող ծրագրեր (մլն դրամ)

	2012		2013	
	Ընդամենը	ՀՀ կառ համաֆին.	Ընդամենը	ՀՀ կառ համաֆին.
Առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագիր	1,166.4	291.6	-	-
Առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր <i>(75% կապիտալ ծախս)</i>	4,041.4	1,010.3	4,597.2	1,149.3
Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման վարկային ծրագիր <i>(100% կապիտալ ծախս)</i>	-	-	6,758.7	1,689.7
Սեզոնային գրիպի համաճարակաբանական ցանցի հիմնման և արձագանքման դրամաշնորհային ծրագիր	-	-	146.8	-
Ընդամենը	5,207.8	1,302.0	11,502.7	2,839
Առողջապահության ընդամենը բյուջեի մեջ, %	8.0	2.0	16.0	3.9

Միջոցների գերազանց մեծամասնությունն ուղղվելու է կապիտալ շինարարությանը: 2012-ի համեմատ 2.2 անգամ աճ:

Քաղաքականության առաջարկներ

- 1.** Առավել մեծ ուշադրության առարկա դարձնել 2014-ի բյուջեի մշակման գործընթացը: 2014-ից պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրումը կհանգեցնի բավականին մեծ լրացուցիչ բյուջետային ծախսերի: Ուստի 2014-ի բյուջեն պետք է **ոչ միայն փոխհատուցի** այդ ծախսերը, այլ 2013-ի համեմատ **աճ ապահովի անկախ այս գործոնի ազդեցությունից**:
- 2.** Գնային գործոններ. Բյուջեի մշակման և բյուջետային քննարկման առարկա պետք է դառնան ոչ թե **անվանական**, այլ **իրական** աճի ցուցանիշները:
- 3.** **Վարկային** ռեսուրսների և **դոնորների** հաշվին առողջապահության ֆինանսավորումը պետք է **առանձին** քննության առարկա դարձնել:

Քաղաքականության առաջարկներ

4. 2014-ի պետական բյուջեից առողջապահության ֆինանսավորումը պետք է զգալիորեն աճի, ընդ որում բնակչությանը մատուցվող հիմնական ծառայությունների գծով: **Նպատակային** ծրագրերի և **վերատադրողական** նշանակության ծրագրերի գծով ֆինանսավորումը պետք է հատուկ ուշադրության առարկա դառնա:

5. Առողջապահական ծախսերի (առողջապահության ֆինանսավորման) ընդլայնման պահանջը մեծ է: Հետևաբար պետք է անընդհատ աճեն և՛ պետական և՛ մասնավոր ծախսումները: